

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

**Ստուգաթերթ N**

**ՄԻՆՉԵՎ 800 ՆՍՏԱՏԵՂՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Ի)  
(ՏԳՏԴ խմբ. 2՝ ծածկագիր 90.04, 91)**

< \_\_ > \_\_\_\_\_ 201 թ.

_____	_____	_____
տեսչության տարածքային մարմնի անվանումը	հասցե	հեռախոս
_____		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
_____		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
_____		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
Ստուգման սկիզբ (ամսաթիվ)՝ _____	ավարտ՝ _____	
Տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպա-իրավական տեսակը		ՀՎՀՀ
Տնտեսավարող սուբյեկտի հասցե		հեռախոս
Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանուն, անուն, հայրանուն		հեռախոս
Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____		
_____ երբ է տրված _____		
Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____		
_____		
_____		

**ՄԻՆԶԵԿ 800 ՆԱՏԱՏԵՂՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՏՈՒԳԱԹԵՐԹ**

	Հարցեր	Այո	Ոչ	Մ	Կշիռ 10 բալանի համակարգով	Հղումներ նորմատիվ իրավական ակտերին	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
<b>I</b>	<b>Շենքերին, շինություններին, տարածքներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
1	Նկուղային (ցոկոլային) հարկերում լուսամուտային խորշերը խուլ փակված չեն:				9	«1», գլուխ 3 կետ 31	2	
2	Սանդղաբազուկների տակ գտնվող տարածքները ազատ են՝ չեն օգտագործվում առարկաների պահման համար:				9	«1», գլուխ 3 կետ 31	2	
3	Արտաքին հրշեջ սանդուղքները գտնվում են սարքին վիճակում:				9	«1», 3 կետ 32	2	
4	Մարդկանց զանգվածային ներկայությամբ շենքերում (շինություններում) միջոցառումների անցկացման ժամանակ հրդեհային անվտանգության ապահովման նպատակով մշակված են համապատասխան միջոցառումներ:				8	«1», գլուխ 3 կետ 38	1;2	I*
5	Հանդիսասրահի և թատերաբեմի խորքային բեմաճաղերի միջև պատը հակահրդեհային է:				9	«22», կետ 1.51	2	
6	Մինչև 800 նստատեղով թատրոնների, ակումբների, ինչպես նաև փակ սպորտային կառույցների հանդիսասրահի կախովի առաստաղը իրականացված են դժվար այրվող կամ չայրվող շինանյութով:				9	«22», կետ 1.58	2	
7	Նվազախմբի փոսորակի արգելափակող կոնստրուկցիաները հակահրդեհային են:				9	«22», կետ 1.61	2	
8	Թատերաբեմի տանիքաձածկը սարքավորված է ծխահեռացման դռնակով:				9	«22», կետ 1.62	2	
9	Թատերաբեմի և գրպանիկների կողմից դեկորացիաների պահեստի բացվածքներում դռները հակահրդեհային են:				9	22», կետ 1.54	2	
<b>II</b>	<b>Մշակութային հիմնարկներ</b>							
10	Մշակութային հիմնարկներում առկա են ցուցանմուշների և ապրանքանյութական այլ արժեքների տարահանման պլաններ:				8	«1», գլուխ 13 կետ 129	1;2	
11	Կրկեսներում և կենդանաբանական այգիներում առկա են կենդանիների տարահանման պլաններ:				8	«1», գլուխ 13 կետ 129	1;2	
12	Հանդիսադահլիճների (տրիբունաների) կարգերի բոլոր աթոռները (բացառությամբ մինչև 12 նստատեղով և առանձին ելք ունեցող օթյակների) ամրացված են հատակին:				9	«1», գլուխ 13 կետ 130	2	
13	Մինչև 200 նստատեղով պարային երեկոների հանդիսադահլիճներում աթոռները միացված են իրար:				9	«1», գլուխ 13 կետ 130	2	

14	Բեմական փայտյա կառուցվածքները (այրունակ դեկորացիաները, բեմական, ցուցահանդեսային ձևավորումները, հանդիսադահլիճների, ճեմասրահների վարագույրները) մշակված են հրապաշտպան նյութով:				9	«1», գլուխ 13 կետ 131	1;2,3	
15	Թատերական հիմնարկների բեմական մասում (գրպանում), միաժամանակ գտնվում են ոչ ավելի քան երկու ներկայացման համար նախատեսված դեկորացիաներ:				9	«1», գլուխ 13 կետ 132	2	
16	Ներկայացման ավարտից հետո, բոլոր դեկորացիաները տեղափոխված է հատուկ պահեստ:				9	«1», գլուխ 13 կետ 133	2	
17	Բեմի վրա հակահրդեհային կենսակարգը պահպանված է:				9	«1», գլուխ 13 կետ 134	2	
18	Բեմադրության (փորձնական ներկայացման) ավարտից հետո հակահրդեհային վարագույրը իջեցված է:				9	«1», գլուխ 13 կետ 136	2	
19	Հատուկ էֆեկտների կիրառման անհրաժեշտության դեպքում պատասխանատու բեմադրիչի (գլխավոր ռեժիսորի, գեղարվեստական ղեկավարի) կողմից հրդեհների կանխման նպատակով մշակված է համապատասխան հակահրդեհային միջոցներ:				9	«1», գլուխ 13 կետ 139	1;2	
<b>III</b>	<b>Տարահանման ճանապարհներ</b>							
20	Տարահանման ճանապարհների պատերը և առաստաղները երեսապատված են չայրվող շինանյութով:				9	«1», գլուխ 3 կետ 41	2	
21	Տարահանման ճանապարհները ազատ են՝ ապահովված է մարդկանց անարգել տեղաշարժը:				9	«1», գլուխ 3 կետ 42	2	
22	Հատակային ծածկերը (գորգերը, ուղեգորգերը) ամրացված են հատակին:				9	«1», գլուխ 3 կետ 44	2	
23	Շենքից տարահանման ելքերի քանակը պակաս չէ երկուսից, եթե դրանում տեղավորված են սենքեր, որոնք պետք է ունենան տարահանման ոչ պակաս քան երկու ելք:				10	«5», կետ 6.14	2	II*
24	15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությանը սենքերի դռները բացվում են դեպի դուրս:				9	«1», գլուխ 1, կետ 41	2	
25	Տարահանման երկու և ավելի ելքերի առկայության դեպքում դրանք տեղակայված են ապակենտրոնացված:				9	«5», կետ 6,15	2	
26	Նկուղային (ցոկոլային) հարկերից տարահանման ելքերը նախատեսված են անմիջապես դեպի դուրս:				9	«5», կետ 6.9, 7.23	2	
27	Անկախ դռների լայնության հաշվարկից հանդիսասրահի դռների բացվածքների լայնությունը փոքր չէ 1,2 մետրից:				9	«22», կետ 1.118	2	

28	Մարդկանց տարահանման համար նախատեսված սանդղաբազուկի լայնությունը պակաս չէ նրա վրա դուրս եկող ցանկացած տարահանման ելքից /դռնից/:				9	«22», կետ 1.96	2	
29	Բազկաթոռների և աթոռների շարքերի միջև պահպանված է նվազագույն 45սմ:				9	«22», կետ 1.119	2	
30	Շարքից միակողմանի ելքի դեպքում նստատեղերի քանակը չի գերազանցում 26-ը:				9	«22», կետ 1.119	2	
31	Շարքից երկկողմանի ելքի դեպքում նստատեղերի քանակը չի գերազանցում 50-ը:				9	«22», կետ 1.119	2	
32	Նկուղային (ցուղային) հարկերից, որի սենքերում օգտագործվում կամ պահվում են այրվող նյութեր, առաջին հարկի սենքեր տանող սանդուղքների առջև կառուցված են հրդեհի դեպքում օդի դիմհարով նախամուտք-անցախցեր:				8	«5», կետ 7.23	2	
33	Նկուղային և ցուղային հարկերում վերելակների առջև կառուցված են հրդեհի դեպքում օդի դիմհարով նախամուտք-անցախցեր:				8	«5», կետ 7.26	2	
<b>IV</b>	<b>Էլեկտրասարքավորումներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
34	Հրդեհավտանգ հիմնատարերով տանիքների, վրայով օդային էլեկտրահաղորդման գծեր անցկացված չեն:				9	«1», գլուխ 4 կետ 47	2	
35	Շենքերը (սենքերը) ջեռուցվում են գործարանային արտադրության ջեռուցիչ սարքերով:				9	«1», գլուխ 4 կետ 48	2	
36	Էլեկտրաբաշխիչ վահանակները կահավորված են գործարանային արտադրության ապահովիչներով:				9	«1», գլուխ 4 կետ 48	2	
37	Լուսավորության շղթաների սնման և կառավարման մալուխների անցուղիները առանձնացված են:				9	«1», գլուխ 4 կետ 49	2	
38	Օգտագործվում են ապակե թասակներով և ճկուն հաղորդագծերով շարժական էլեկրտալուսատուներ:				9	«1», գլուխ 4 կետ 51	2	
39	Լուսատուներից մինչև այրվող նյութից պատրաստված կառուցվածքները և իրերը պահպանված է ոչ պակաս քան 0,5մ հեռավորություն:				10	«1», գլուխ 4, կետ 52	2	
<b>V</b>	<b>Ջեռուցման և օդափոխման համակարգերին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
40	Կաթսայատներում հեղուկ վառելանյութ պահեստավորված չէ:				9	«1», գլուխ 5 կետ 61	2	
41	Օդափոխիչ համակարգի ինքնաշխատ անջատման սարքավորումները գտնվում են սարքին վիճակում:				9	«1», գլուխ 5 կետ 68	2	
42	Կաթսայատան տանիքը դյուրանետ է կամ յուրաքանչյուր 1մ <sup>3</sup> ծավալի համար նախատեսված է 0,03 մ <sup>2</sup> մակերեսով բացվածքներ:				9	«25», կետ 3.16	2	

43	Շենքի միջանցքներում տեղակայված է հակաձխային պաշտպանության համակարգ:				9	«6», գլուխ 8	2	
44	55մ <sup>2</sup> և ավել մակերեսով բնական լուսավորություն չունեցող սենքերում տեղակայված է հակաձխային պաշտպանության համակարգ:				9	«6», գլուխ 8	2	
<b>VI</b>	<b>Հակահրդեհային ջրամատակարարման ցանցեր</b>							
45	Շինություններին (այդ թվում նաև հակահրդեհային ջրամատակարարման աղբյուրներին) հրշեջ փրկարարական ուժերի և միջոցների մոտեցումը ստուգվողի կողմից փակված չէ:				10	«5», կետ 8.14	2	
46	25000 մ <sup>3</sup> և ավելի ծավալով շինությունների արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված է ոչ պակաս քան 2 հրշեջ հիդրանտ:				10	«7», կետ 8.16	2	
47	Հիդրանտների տեղակայման համար նախատեսված ջրագծի տրամագիծը փոքր չէ 100 մմ-ից:				10	«7», կետ 8.46	2	
48	Շենքում 12 և ավելի ներքին հրշեջ ծորակների առկայության դեպքում ներքին հակահրդեհային ջրագիծը միացված է արտաքին օղակավորված ջրագծի տարբեր տեղամասերին երկու մուտքագծով:				10	«8», կետ 9.2	2	
<b>VII</b>	<b>Հրդեհի ազդանշանման և հրդեհաշիջման համակարգեր</b>							
49	Մշակութային հիմնարկները սարքավորված են հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	III*
50	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տազնապի ազդանշանը փոխանցվում է լիազոր մարմնին:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	
51	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգը գտնվում է սարքին վիճակում:				9	«1», գլուխ 7 կետ 100	2	
<b>VIII</b>	<b>Հրդեհաշիջման սկզբնական միջոցներ</b>							
52	Օբյեկտն ապահովված է հրդեհաշիջման սկզբնական միջոցներով:				10	«1», բաժին VIII կետ 504	1;2	IV*
53	Կրակմարիչները տեղադրված են հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա:				9	«1», բաժին VIII կետ 512	2	
54	Առկա է արտադրական վտանգավոր օբյեկտը արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականը:				9	«9», հոդված 19 կետ ժդ	1	
55	Արտադրական վտանգավոր օբյեկտում առկա է տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության դրական եզրակացություն:				9	«9», հոդված 19 կետ ժբ	1	

Ծանոթություն: Նախավերջին սյունակում 1- փաստաթղթային ստուգում:

2- ակնադիտարկում:

### 3- լաբարատոր ստուգում:

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա.

1 – ՀԱԿ- «Հրդեհային անվտանգության կանոններ» - հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 263 հրամանով, հավելված 1:

3 – ՍՆԻՊ 2.07.01-89 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»:

5 – ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

6 – ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»:

7 – ՍՆԻՊ 2.04.02-84\* «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ»:

8 – ՍՆԻՊ 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի»:

9 – «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին:

22 – ՍՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և կառուցվածքներ»:

25 – ՍՆԻՊ II-35-76 «Կաթսայական կայանքներ»:

I\*- Մարդկանց զանգվածային ներկայությամբ շենքերում, շինություններում և բաց տարածքներում ամանորյա և այլ տիպի միջոցառումների անցկացման ժամանակ՝

1) անհրաժեշտ է՝

ա) տոնաձառը դնել կայուն հենամասի վրա այնպես, որպեսզի ճյուղերը չքսվեն պատերին և առաստաղին.

բ) տոնահանդեսի անցկացման վայրում էլեկտրական լուսավորության բացակայության դեպքում միջոցառումները անցկացնել ցերեկային ժամերին. տոնաձառի վրա օգտագործել լամպերի շղթաներ մինչև 12 Վտ հզորությամբ լամպերի հաջորդական միացմամբ՝ առանց ցածրացնող տրանսֆորմատորի.

գ) լուսավորության անսարքություններ հայտնաբերելու դեպքում (լարերի տաքացում, լամպերի թարթում, կայծարձակում և այլն) սարքը պետք է անմիջապես հոսանքազրկել:

2) չի թույլատրվում՝

ա) օգտագործել աղեղնավոր լուսարձակներ, լուսավորել մոմերով, վառել հրավառելիք, ստեղծել այլ լուսային հրդեհավտանգ էֆեկտներ, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ.

բ) օգտագործել գնդակներ, փուչիկներ, խաղալիքներ և զարդարանքի միջոցներ, որոնք պատրաստված են հրդեհավտանգ նյութերից և պարունակում են հրդեհապայթունավտանգ գազեր, ինչպես նաև ինքնայրման հակում ունեցող կամ միմյանց հետ շփվելիս այրում կամ պայթյուն առաջացնող նյութերից.

գ) տոնաձառը զարդարել հրապաշտպան բաղադրություններով չտոգորված ցելուլոզիդե խաղալիքներով, թանզիֆով, բամբակով.

դ) միջոցառումներ անցկացնելու տեղերը մթնեցնելու համար պատուհանները փակել ծածկոցափեղկերով.

ե) փոքրացնել կարգերի միջև եղած հեռավորությունները, ինչպես նաև անցումներում լրացուցիչ բազկաթոռներ տեղադրել և այլն.

զ) դահլիճում լույսը լրիվ մարել բեմադրությունների և ներկայացումների ժամանակ:

3) բեմում և դահլիճում պետք է կազմակերպվի հրշեջ հերթապահություն՝ կազմակերպիչների ուժերով:

II\*- Ոչ պակաս քան տարահանման երկու ելք պետք է ունենան.

ա) տաս մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված մանկական նախադպրոցական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների մասնագիտացված տների (ոչ բնակարանային), հիվանդանոցների, ինտերնատ-դպրոցների և մանկական հիմնարկների ննջարանային մասնաշենքերի սենքերը,

բ) տասնհինգ մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված նկուղային և ցոկոլային հարկերի սենքերը, 50 մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված սենքերը,

գ) առավել բազմաթիվ հերթափոխում հինգ մարդուց ավելի աշխատողների թվաքանակով արդյունաբերական և պահեստային շենքերի, կառուցվածքների Ա և Բ կարգի սենքերը, 25 մարդուց ավելի - Վ կարգի կամ 1000 մ<sup>2</sup> ավելի մակերեսով սենքերը,

դ) Արդյունաբերական և պահեստային շենքերի, կառուցվածքների բաց հարկաշարերը և հարթակները, նախատեսված սարքավորման սպասարկման համար, Ա և Բ կարգի սենքերի համար - 100 մ<sup>2</sup> ավելի հարկաբաժնի հատակի մակերեսի դեպքում և 400 մ<sup>2</sup> ավելի - այլ կարգի սենքերի համար,

ե) երկու հարկերում (մակարդակներում) տեղադրված բազմաբնակարան բնակելի շենքերի սենքերը (բնակարանները), վերին հարկի տեղադրման 18 մ-ից ավելի բարձրության դեպքում, դրանք պետք է ունենան տարահանման ելքեր յուրաքանչյուր հարկից:

III\*- Հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով օբյեկտների համալրման չափանիշներն են.

Պահպանվող օբյեկտների տեսակը	Պահանջվող հակահրդեհային համակարգեր	
Շենքեր	ՀՀԱԻԿ	ՀՏԱԻՀ և ՀՏԱՓԻՀ
	Նորմատիվ ցուցանիշներ	
1. 30 մ-ից ավելի բարձրությամբ շենքեր (բացառությամբ բնակելի և հրդեհային անվտանգության «Գ» և «Դ» կարգի արտադրական շենքերից):	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
2. Այրելի պոլիմերային ջերմամեկուսիչներով և մետաղական թեթև կառուցատարրերով միահարկ շենքեր		
2.1. Հասարակական նշանակության	800 մ <sup>2</sup> և ավելի՝ համաձայն "Բնակելի շենքեր" ՍՆԻՊ 2.08.01-89 շինարարական	800 մ <sup>2</sup> -ից պակաս

	նորմի 1.34 կետի	
2.2. Վարչա-կենցաղային նշանակության	1200 մ <sup>2</sup> և ավելի	1200 մ <sup>2</sup> -ից պակաս
3. Ցուցասրահների շենքեր.		
3.1. Միահարկ (բացառությամբ սույն հավելվածի 12-րդ կետում նշվածների)	1000 մ <sup>2</sup> և ավելի	1000 մ <sup>2</sup> -ից պակաս
3.2. Երկու հարկ և ավելի	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
4. Հազվագյուտ հրատարակչությունների, հաշվետվությունների, ձեռագրերի և հատուկ արժեվորության այլ փաստաթղթերի (այդ թվում գործոյթների բաժինների արխիվների) պահպանման և հանձնման սենքեր	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
5. Պահոցների, գրադարանների ու արխիվների ծառայողական գույքացուցակների և գրացուցակների պահպանման սենքեր, պահպանման ընդհանուր ֆոնդով.		
5.1. 500 հազար և ավելի	Անկախ մակերեսից	
5.2. 500 հազարից պակաս	-----	Անկախ մակերեսից
6. Ցուցասրահներ, բացառությամբ՝ ժամանակավոր ցուցադրման համար օգտագործվող սենքերի (ճեմասրահներ, նախասրահներ և այլն), ինչպես նաև այն սենքերի վրա, որտեղ արժեքների պահպանումը իրականացվում է մետաղական պահարաններում:	1000 մ <sup>2</sup> և ավելի	1000 մ <sup>2</sup> -ից պակաս
7. Թանգարանային արժեքների պահպանման սենքեր	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
8. Մշակութա-տեսարանային նշանակության շենքերում.		
8.1. Բեմաճաղերի առկայությամբ բեմահարթակներով 700-ից ավելի նստատեղերով կինոթատրոններ ու ակումբներ:	Անկախ մակերեսից	700 նստատեղից պակաս
8.2. Մինչև 700 նստատեղերով 12.5X7.5, 15X7.5, 18X9 և 21X12 մետր չափերով բեմով ակումբներ	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
8.3. 700-ից ավելի նստատեղերով 18X9, 21X12 և անկախ նստատեղերի քանակից 18X12 և 21X15 մետր չափերով բեմով ակումբներ, ինչպես նաև թատրոններ՝	Անկախ մակերեսից	700 նստատեղից պակաս
8.4. 800 և ավելի նստատեղերով ֆիլիհարմոնիայի համերգային, կինոհամերգային և մարդկանց զանգվածային կուտակման համար նախատեսված դահլիճներ	Անկախ մակերեսից	800 նստատեղից պակաս
8.5. Բեմազարդանկարների, շինծու իրերի, բեմիրերի, պահեստներ, փայտամշակման արհեստանոցներ, տնտեսական և գույքային խորդանոցներ, գովազդի պատրաստման և պահպանման սենքեր, բեմի սպասարկման և արտադրական նշանակության սենքեր, կենդանիների համար սենքեր, հանդիսատեսի դահլիճի վերևի՝ գմբեթատակի ձեղնահարկային տարածություն	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
9. Կինոստուդիաների նկարահանման տաղավարներ	1000 մ <sup>2</sup> և ավելի	1000 մ <sup>2</sup> -ից պակաս
10. Այրելի նյութերի կամ այրելի փաթեթավորմամբ չայրվող նյութերի պահպանման սենքեր, դրանց տեղակայմամբ.		



10.1. Սպորտային ծածկած կառույցների ցանկացած տարողությամբ տրիբունաների տակ	100 մ <sup>2</sup> և ավելի	100 մ <sup>2</sup> -ից պակաս
10.2. 800 և ավելի հանդիսատեսներով սպորտային ծածկած կառույցներ	100 մ <sup>2</sup> և ավելի	100 մ <sup>2</sup> -ից պակաս
10.3. 3000 և ավելի հանդիսատեսներով սպորտային բաց կառույցների տրիբունաների տակ	100 մ <sup>2</sup> և ավելի	100 մ <sup>2</sup> -ից պակաս
11. Այլ վարչական և հասարակական նշանակության սենքեր, այդ թվում կցակառուցված և ներկառուցված	-----	Անկախ մակերեսից

IV\*- Շենքերը և շինությունները ձեռքի կրակմարիչներով ապահովելու չափանիշները ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակներում.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ <sup>2</sup>	Հրդեհի դասը	Փրփրային և ջրային կրակմարիչներ 10 և 100 լ տարողությամբ	Փոշային կրակմարիչներ տարողությամբ, և			Ֆրենային կրակմարիչներ 2(3) և տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ և	
					2	5	10		2	5(8)
1	Ա.Բ.Վ. այրվող գազեր և հեղուկներ	200	A	2++	-	2+	1++	-	-	-
			B	4+	-	2+	1++	4+	-	-
			C	-	-	2+	1++	4+	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2+	1++	-	-	2++
2	Վ	400	A	2++	4+	2+	1+	-	-	2+
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2++	1+	2+	4+	2++
3	Գ	800	B	2+	-	2++	1+	-	-	-
			C	-	4+	2++	1+	-	-	-
4	Գ.Դ.	1800	A	2++	4+	2++	1+	-	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	2+	2++	1+	2+	4+	2++
5	Հասարակական շենքեր	800	A	4++	8+	4++	2+	-	-	4+
			E	-	-	4++	2+	4+	4+	2++

Սույն աղյուսակում ամրագրված՝ տարբեր դասերի հրդեհների մարման համար փոշային կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում, «A» դասի համար ABC(E) փոշի, «D» դասի համար՝ (D):

Սույն աղյուսակում.

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

Շենքերը և շինություններն, ըստ մակերեսի, օդափրփրային, համակցված, փոշե, և ածխաթթվային կրակմարիչներով ապահովվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ <sup>2</sup>	Հրդեհի դասը	Օդափրփրային կրակմարիչներ (փրփուր) 100 լ տարողությամբ	Համակցված կրակմարիչներ (փրփուր, փոշի) 100լ տարողությամբ	Փոշե կրակմարիչներ 100 լ տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ լ.	
							25	80
1	Ա,Բ,Վ (այրվող գազեր և հեղուկներ)	500	A	1++	1++	1++	-	-
			B	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	2+	-	-
2	Գ (բացի այրվող գազերից և հեղուկներից)	800	A	1++	1++	1++	-	-
			D	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	1+	-	-

Սույն աղյուսակում ամրագրված տարբեր դասերի հրդեհների օջախների հրդեհաշիջման համար փոշու և համակցված կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում.

1) «A» դասի համար՝ ABC(E) փոշի.

2) «B», «C» և «E» դասի համար՝ BC(E) կամ ABC(E) փոշի.

3) «D» դասի համար՝ D փոշի:

Սույն աղյուսակում.

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

**ՄԻՆՉԵՎ 800 ՆՍՏԱՏԵՂՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՏՈՒԳԱԹԵՐԹԻ**

Սույն ստուգաթերթում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) այրվող նյութ՝ ինքնուրույն, կրակի աղբյուրի հեռացումից հետո այրվող նյութ.
- 2) հակահրդեհային պատնեշ՝ շենքի ծավալը հակահրդեհային հատվածամասերի բաժանող, շենքում և սենքում հրդեհի ու այրման արգասիքների տարածումը խոչընդոտող և համապատասխան հրակայունության սահման ունեցող պատեր, միջնորմներ, ծածկեր, բացվածքների հրակայուն լցվածքներ, նախամուտք անցախուցեր.
- 3) դյուրանետվող կոնստրուկցիաներ՝ ապակեպատ պատուհաններ և երդիկներ կամ պողպատե, ալյումինե և ասբոցեմենտի թերթերով և արդյունավետ ջերմապահպանիչներով ծածկեր:
- 4) հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքներ (ՀՀԱԻԿ)՝ նախատեսված են հրդեհաշիջման և հրդեհի վայրի հայտնաբերման համար.
- 5) հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ (ՀՏԱԻՀ)՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդարարման համար.
- 6) հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգ (ՀՏԱՓԻՀ)՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդանշանը օբյեկտից կապի որևէ հնարավոր միջոցով լիազոր մարմնին հաղորդման համար.
- 7) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն.
- 8) հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, արկղ ավազով, դույլ, բահ, կեռածող, կացին: